

բոլոր այն միջոցները որ կընան սիրցնել հայ մշակույթը եւ տարածել դայն: Ասոր անմիջական ձեռնարկները պիտի ըլլան հիմնարկութիւնը հայ արուեստի թանգարանի մը որ ի հարկին կորիզը պիտի կազմէ ցուցահանդէսներու՝ հոս եւ այլուր, հաստատութիւնը Մատենաշարի մը որ ի լոյս պիտի բնծայէ առաւելապէս մեր մոռցուած հեղինակները, գաղութներու սրտմուկութեան վերաբերեալ նիւթեր եւ հայ մշա-

կոյթի փրփրականաին ծառայող երկեր, եւ ստեղծումը վ. ըլլէնի աէ Մաւնթէի — Փրօֆ. Եօրկայի մատուրական բերդաքաղաքին — մէջ Հայ Օճախի մը, իբրեւ կուսան հայ ե ուսմէն մտքի եղբայրակցութեան: Ասոնց մէջ դատ, ան պիտի կազմակերպէ նաեւ կարգ մը տօնախմբութիւններ (Աղամեանի եւ Պարոնեանի մահուան քառասնամեակը յառաջիկայ տարի, Ալիշանի եւ Տիկին Տիւսաբի մահուան երեսնամեակը, եւլն.):»

ԼՐԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
 ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻՑ

«Մէրը» վիպակը. — Վրաց լեզուով թարգմանւեց Մկրտիչ Արմէնի «Մէրը» վիպակը:

Շիրվանգաղէն Աղբրէջանի արւեստի վաստակաւոր գործիչ. — Խորհրդային Աղբրէջանի Ժողովօրհորհը տեղ է լայանի վիպասան եւ գրածատուրդ Շիրվանգաղէին Աղբրէջանի արւեստի վաստակաւոր գործիչի կոչում, իսկ Վրաստանի կուսովոյի օժանդակող կողմէն որոշմամբ Շիրվանգաղէի անունն է կրելու Թիֆլիսի ՏՅրդ դպրոցը:

Հ. Ս. Ա. Հ. Պրոլետարական ճարտարապետների Միութեան տէկլարացիան. — Երեւանում կազմակերպւել է Խորհրդային Հաստատանի Պրոլետարական ճարտարապետների Միութիւն, որն իր հիմնադիր ժողովում ընդունել է ձի տէկլարացիա որի հիմնական ձի քանի կէտերն են.

«Մենք ժխտում ենք, — աւսած է տէկլարացիայում, — էկլէկտիկ ճարտարապետութիւնը եւ էկլէկտիկները ձեթոտը, որոնք ձեթեհայտէն ընդօրինակում են հին ճարտարապետութիւնը, կուրորէն ենթարկում կլասիկ օրէնքներին եւ ոլտեմաներին, Մեր օրերի էկլէկտիկան յետադիմական է... նա խեղդում է նոր կօլեկտիւ կենցաղի ծիւերը...

«Մենք դէժ ենք այն «ազգային ճարտարա-

պետութեանը», որ քարոզում եւ հասկանում են բուրժուազիան եւ նրան սպասարկող ճարտարապետները, որքան որ նա խկապէս ազգային է իշխող փոքրամասնութեան շահերի տեսակէտից: Այդ ճարտարապետութիւնը ձեթեհայտական փոխադրում է ձեր օրերը պատմական էկլէկտիկան - ֆէօդալական ճարտարապետութեան, որը կազմում է ճարտարապետական բնութագրի ինքնիշխան բունակալները, բայց ոչ երբեք աշխատարական սարերի:

«Ազգային ճարտարապետութիւնը, ելնելով պրոլետարիատի եւ դիւղադիութեան ժամանակակից պահանջներից եւ յենելով առաջաւոր տեխնիկայի վրայ, լիովին կը համապատասխանի իւրաքանչիւր երկրի աշխարհագրական եւ կենցաղային առանձնայատկութիւններին, իր եռանդը կը ստանայ նրանցից:

«Մենք ժխտում ենք ֆորմալիզմը...

«Մենք ժխտում ենք ձեր օրերի կոնսարուկտիւիզմը...

«Մենք գանում ենք, որ պրոլետարիատի դիկտատուրայի երկրի սօցիալիստական վերակառուցման համար ճիւղ պայքարի դարաշրջանում ճարտարա-

պետութիւնը դասակարգային պիտի լինի իր բովանդակութեամբ եւ ձևով, պէտք է սպասարկի պրոլետարիատի կօնկրէտ պահանջներին:

«Մենք գտնուած ենք, որ պրոլետարական ճարտարապետութիւնը պիտի զարգանայ զիտիկտիկական ճատերիպիլիդի մեթօտը կիրառելով իր աեսութեան եւ պրակտիկայի մէջ...»

«Ելնելով մեր տնտեսութեան Հիմնական իւրնդիրներէ, մենք պէտք է զիտութիւնն ու տեխնիկական ուղղենք դէպի մեր շինարարութեան առաւելագոյն ապրիօնալացումն ու էմանացումը...»

«Մեր կենցաղի մէջ Հիմնական տեխնիկան է կոնկրետացման ձգտումը կեանքի բոլոր ասպարէզներում եւ առողջ, ապրիօնալ ու կենսութալ պայմանների ստեղծումը՝ Համակեցութեան, աշխատանքի եւ Հանգստի Համար: Ճարտարապետի առաջ զբաւած են մի շարք գործնական խնդիրներ, բնակարանների կառուցումը՝ ոչ ծանր սեփականատիրական, այլ խոշոր, կոմունալ տիպի, գործարանների, կոլտնտեսութիւնների կառուցումը:

«Մենք կողմնակից ենք պրոլետարական արւեստին, որն իր բովանդակութեամբ արտայայտուած է բանւոր դասակարգի խորունկ մաքերն ու ձգտումները...»

«Մենք կողմնակից ենք պրոլետարական գասակարգային ճարտարապետութեան, կօնստրուկտիւ եւ ֆօրմալ աճրողջութիւն ներկայացնող, կայտառարւեստին, որը կազմակերպուած է մասսաների կամքը՝ պայքարի եւ աշխատանքի Համար:

Երեւանի պետական թատրոնը մասնակցում է համամիութենական օլիմպիադային.— Երեւանի Պետթատրոնը մասնակցում է Մոսկուայի Համամիութենական թատերական օլիմպիադային: Խումբը բեմադրելու է «Խաթա Բալա», «Պէպօ», «Քաջ Նագար», «Եկամտաւոր պաշտօն» եւ «Ցասում» պիէսները:

Մինչեւ օլիմպիադային մասնակցելը, Պետթատրոնը Մայիսի սկզբից գաստրոլներով մեկնում է Թիֆլիս, Բագու, Ռոստով եւ Խարկով քաղաքները, ուր բաց ի վերոյիշեալ Հինգ պիէսներից, բեմադրելու է նոյնպէս «Ռելսերը զրնգում են», «Հրէ կամուրջ», «Լագտերի ձօտ» եւ «Երբ աքաղաղները կանչուած են» պիէսները:

Յ. Թումանեանի «Անուշ»ի նկարման աշխատանքները.— Ռէժիսէօր Պերեստիանին եւ օ-

պերատօր Գեօնն սկսել են «Անուշ»ի նկարման աշխատանքները: Զմեւնային տեսարանները Հանւելու են Զանգեզուրում:

Գերասանուհի Վարդուհու բեմական գործունէութեան 50ամեակը — Լրացու գերասանուհի Վարդուհու բեմական գործունէութեան 50ամեակը: Գերասանուհու գլուխ-գործոց զերերը Գ. Սունգուկեանի տիպերն են — Շուշան («Պէպօ»), Խալսոլ («Խանուծ») եւ այլն:

Երաժշտական կարեւոր զեկուցում. — Երաժշտագէտ Սարգիս Քարխուզարեանը Հայարտան զեկուցեց «Դիալեկտիկայի սկզբունքները սօնատային ձեւի մէջ» նիւթի մասին:

Սայաթ-Նովայի մասին.— Գօցէնա Լ. Մելիք-Սէթ բէկը Սայաթ-Նովայի մասին տւեց Հետաքրքիր մի զեկույց:

«Հայ Ժողովրդական երգի գամման».— Երեւանում լոյս տեսաւ երաժշտագէտ Սպ. Մելիքեանի «Հայ Ժողովրդական երգի գամման» լսարագրով լուրջ աշխատութիւնը: Երաժշտագէտը նախ՝ Համաօտակի տալիս է նախնական տեղեկութիւններ այն գամմաների մասին, որոնք կազմուած են բոլոր Ժողովուրդների երաժշտութեան Հիմքը: Այնուհետեւ վերլուծման է ենթարկուած Հազար Հատ Հայ Ժողովրդական երգեր, որոնց մայնագրել, գրել է առեւ Հէնց լինը 25 տարւայ ընթացքում:

Նկարիչ Վանօ Խոջարէգեանի նկարների ցուցահանդէսը.— Թիֆլիսի Հայարտան նկարչական սէկիւրան կազմակերպուած է տաղանդաւոր նկարիչ Վանօ Խոջարէգեանի նկարների ցուցահանդէսը: Այդ առիթով նկարչական սէկիւրան ձեռք է բերել նկարչի այն բոլոր նկարները, որոնք գտնուած են զանազան անձանց մօտ: Այդ տեսակէտից էլ ցուցահանդէսը առանձին նշանակութիւն է ստանում. այնտեղ զիտողը կօնկրէտ գաղտիար է կազմուած նկարչի արւեստի եւ նւաճումների մասին: Ահա այդ տեսակէտից էլ շնորհակալութեան եւ քաջալերանքի արժանի է Հայարտան նկարչական սէկիւրայի նախաձեռնութիւնը:

Հայաստանի նկարիչների պատկերահանդէսը.— Մայիս ամսում բացեց Հայաստանի (Երեւան) նկարիչների ընդհանուր պատկերահանդէսը, որին մասնակցել էին Հայաստանի յեղափոխական արւեստագէտների միութիւնը, յեղափոխական արւեստագէտների միութեան երիտկազմակերպութիւնը,

Հայաստանի կերպարեստադէաների ծիւղիւնը եւ անհաս արեստադէաներ: Թւով ծօա 40 նկարիչներ, քանդակագործներ եւ ճարտարապետներ ցուցադրել են ծօա 560 դեղարեստական գործ: Յուցահանդէսում աչքի էին ընկնում Փ. Թեղեմեզեան, իր «Ղափանի Պղնձի արդիւնաբերութիւնը», «Զուլարանը», «Պիտերները Զանգուի ափին» գործերով եւ Զանգեզուրի ծի շարք նկարներով, Վ. Գայֆեկեան, որի «Գեղջիկուհի», «Անձրեւային Գիշերը Անինդրադում» եւ այլ նկարները արժանի են ուշադրութեան, Գաբրիէլ Գիւրջեան, որ աչքի էր ընկնում իր վերջին շրջանի նւաճումներով, Յակոբ Կոջոեան, որ անվաստի վարպետ է որպէս գրաֆիկ, Մ. Սարեան, Ե. Թագեոսեան, Ս. Աղաջանեան, Ս. Առաքելեան, Գ. Շարբարջեան, Վ. Ախիկեան, Տարագրոս Հանդէս եւ եկել ամէն ձեկը իր ուրոյն նւաճումով եւ իր տաղանդի բնորոշ զծերով: Քանդակագործներից աչքի էին ընկնում Ս. Թարեան եւ յատկապէս Ս. Ստեփանեան, եւ այլն:

Պատկերահանդէսին ծանակցում էին նաեւ բաղձաթիւ երիտասարդ նկարիչներ, քանդակագործներ եւ գրաֆիկներ, որոնց ձեջ կան ապագայ խոստացող ուժեր:

Այս պատկերահանդէսը ուշագրաւ է նրանով, որ Հայաստանում առաջին ցուցահանդէսն է, ուր հանդէս են գալիս կաղձակերպւած կերպով ձեր բոլոր նկարիչներն ու քանդակագործները:

Այդ տեսակէտից ողջունելի է այդ ձեռնարկը, եւ առաջին հերթին պիտի շնորհակալութիւն յայտնել Երեւանի Գեղաշէի կերպարեստի սէկցիային, որ այդ պատկերահանդէսի նախաձեռնողն է եղած:

Ծերոն Թորգոմեանի «Աղայի Փեշքէշը» եւ «Յորձանքում».— Վրաստանի Խորհրդային Գրողների Ֆեդերացիայի Հայկական սէկցիան Յունիսի 12ին, Հայարտան թատրոնում կաղձակերպեց գրական ասուլիս յայտնի գրող Ծերոն Թորգոմեանի «Աղայի Փեշքէշը» եւ «Յորձանքում» գրւածքների ծասին: Խօսեց՝ Մ. Գաբրիէլեանը, որից յետոյ հանդէս եկան ծի շարք գրողներ եւ արեստադէաներ:

«Հայրամիւրում».— Երեւանում կաղձակերպեց գրամատուրգների, կոմպոզիտորների եւ կինօպերնորիտանների ընկերութիւն «Հայրամիւրում» անունով, որն աչսուհեաեւ գրադեյու է հեղինակների նիւթական եւ իրաւական շահերի պաշտպանութեամբ եւ համախմբելու է արեստի որոշ ծիւղերի գործիչներին:

«Շատրուան».— Բազում լոյս տեսաւ Ազրբէջանի պրոլետ-գրողների Հայկական սէկցիայի «Շատրուան» գրական գեղարեստական ժողովածուն:

«Առւարաց».— Լոյս տեսաւ Վրաստանի Գրողների Ֆեդերացիայի Հայկական սէկցիայի օրգան «Առւարաց»ի 4րդ համարը հեռեւեալ բովանդակութեամբ:—

Գրական բաժին.— Շիրվանդադէ՝ «Ակոյի տունաձառը», Ազ. Վարդանեան՝ «Իձ ծանիներից», Նարդոս՝ «Ես եւ Նա», Գրիգ՝ «Գարուն» եւ «Կուխտանիկ ընկերոջս յիշատակին», Արաղի՝ «Յարձարեանի յուշատարից», Վեսպեր՝ «Երձակ երգեր», Սաքօ Սուբխասեան՝ «Այդ կայծոյ օրերը», Ե. Բահաթուր՝ «Գէպքեր ու Գէձքեր», Բանուր Գէոօ՝ «Անպէտք ճարգը», Վարտանիկ Աղասեան՝ «Անուշ-Անուշ» եւ «Գարնան երգեր», Ծերոն Թորգոմեան՝ «Գիւղում», Արամ Երեմեան՝ «Ճարտարապետ Մադինեան», ևն.:

Նկարչական բաժին.— Գ. Շարբարջեան՝ «Գորգագործութիւն», Ռ. Լօրիս-Մելիքեան՝ «Երհեստանոց», Յովհ. Եարայեան՝ «Անգրագիտութեան վերացումը», Մակօ Մարգարեան՝ «Քաղաք»:

Երաժշտական բաժին.— Վարդգէս Տալեան՝ «Կոճունի արտում» (խմբերգ), Ա. Մանուկեան՝ «Շողեր» (ձեներգ):

Թիֆլիս Թ. Գ. Թ. Ա. Կ. Ի. Յ.

USUSUՆՔ

ՅՈՒՇԱՐՉԱՆ, նուիրուած Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան Քառասնամեակին: Հրատ. Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան Ծրանսայի Շրջանի: Մեծադիր շքեղ հատոր մը պատկերազարդ: Տպագր. Յ. Թիւրապեան, 227 Blvd. Raspail, Paris, 1930: Գին՝ 60 ֆրանք: Ամերիկա 4 տուար:

ԾԵՐՈՒՆ ԹՈՐԳՈՄԵԱՆ, ժողովածու երկերի, հատոր առաջին (պատմուածքներ). Թիֆլիս, 1926: Գին 1 ո. 20 կ.:

ԾԵՐՈՒՆ ԹՈՐԳՈՄԵԱՆ, Վրայի Փեշքէշը. վիպակ. Թիֆլիս, 1930: Գին 20 կ.:

ՌՈՒԲԷՆ ԱՂԱԲԱԲ, Լիւրիկա (բանաստեղծութիւններ): Հրատարակութիւն Վրաստանի Պրոլետ-Գրողների Ասոսիացիայի Հայկական սէկցիայի, Թիւ 10: Թիֆլիս, 1930. գին 10 կ.:

Վ. ԱՏՐԵԱՆ, Զրախագնացքը, վիպակ: Պե-